

5.12. 2005թ. հունիս ամսվա հիդրոտեղությունների արտադրանքային պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, հունիսին օդի ամսական միջին ջերմաստիճանը եղել է նորմայի սահմաններում:

Հունիսի 4-7-ին օդի ջերմաստիճանը նվազել է: Օդի օրական միջին ջերմաստիճանը ցածր է եղել նորմայից 2-4 աստիճանով: Հունիսի 24-ին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում գրանցվել է $-2 +4^{\circ}\text{C}$ (Լոռիում՝ $+1 +5^{\circ}\text{C}$, Տավուշում, Սյունիքի նախալեռներում՝ $+6 +11^{\circ}\text{C}$, Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ $+9 +10^{\circ}\text{C}$):

Օրական միջին ջերմաստիճանը հունիսի 10-12-ին և 16-17-ին նորմայից բարձր է եղել 4-5 աստիճանով: Առավել բարձր ջերմաստիճան է գրանցվել հունիսի 12-ին, առանձին վայրերում՝ 16-ին: Հունիսի 12-ին առավելագույն ջերմաստիճան գրանցվել է Արարատյան դաշտում և Սյունիքի հովիտներում՝ $+34 +36^{\circ}\text{C}$, Ջվարթնոցում (Արմավիրի մարզ)՝ $+35^{\circ}\text{C}$, Տավուշում, Լոռիում, Սյունիքի նախալեռներում, լեռնային շրջաններում՝ $+26 +28^{\circ}\text{C}$: Գրանցված առավելագույն ջերմաստիճանները մոտ են եղել տվյալ օրվա երբևէ գրանցված բացարձակ առավելագույն ջերմաստիճաններին (Արմավիրում այն գերազանցել է տվյալ օրվա երբևէ գրանցված բացարձակ առավելագույն արժեքը):

Ամսական տեղումների քանակը հանրապետության տարածքի մեծ մասում կազմել է նորմայի 100-150%-ը, Արտաշատում (Արարատի մարզ)՝ 221%, Սյունիքում, Վայոց ձորում՝ 48-75%: Հունիսի 6-ին Աշոցքում (Շիրակի մարզ) տեղացել է հորդ անձրև: Աշոցք գետը վարարել է և ծածկել ափամերձ խոտհարքի մոտ 30%-ը: Հունիսի 1-ին Տավուշի մարզում և Ջերմուկում (Վայոց ձորի մարզ), 6-ին՝ Վանաձորում (Լոռու մարզ), Սիսիանում (Սյունիքի մարզ) և Ջուլյա Աղբյուր գյուղում (Շիրակի մարզ), 13-ին՝ Օձունում (Լոռու մարզ), Իջևանում (Տավուշի մարզ), Հրազդանում (Կոտայքի մարզ) և Արմավիրի մարզի առանձին գյուղերում, 26-ին՝ Ապարանում (Արագածոտնի մարզ) և Արտաշատում (Արարատի մարզ), 29-ին՝ Իջևանում դիտվել է կարկուտ: Ամսի 9-11-ին, 17-19-ին, 24-25-ին դիտվել է առավելապես առանց տեղումների եղանակ:

Հունիսի 4-5-ին Ուրցաձորում (Արարատի մարզ), 20-ին՝ Ապարանում և Արարատում, 26-ին՝ Ֆանտանում (Կոտայքի մարզ), Արմավիրում, Արտաշատում և Երևանում, 29-ին Իջևանում դիտվել է քանու ուժգնացում: Քանու արագությունը հասել է 16-21մ/վրկ (Թալինում /Արագածոտնի մարզ/ պոռթկումները՝ 30մ/վրկ): Հունիսի 24-ին Աշոցքում դիտվել է ցրտահարություն, օդում՝ -2°C , հողի մակերեսին՝ -4°C :

Չյան ծածկը պահպանվել է 3200մ-ից բարձր տարածքներում:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների մոտ 90-110%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 11 սմ-ով և 2005թ. հունիսի 30-ի դրությամբ կազմել 1898.31 մ, որը 2004թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 37 սմ-ով: